ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«20» 01 2026թ.
№ ԿԳԵՆ2/80

«ԶԳՍՏ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00233659/
ՀՀ, ք. Երևան, Նոր Արեշ,45 փ.,շ. 80
էլ. փոստի հասցե՝ cfo@zgst.am
Հեռ.՝ 091-55-77-97

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԶԳՍՏ» ՍՊԸ-ի միջև 13.06.2025թ. կնքված N ԳՀԱՊԶԲ-25-7/13-3 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԶԳՍՏ» ՍՊԸ-ն պետք է մատակարարեր 1300 հատ « Թևքանշան և այլ պարագաներ /Թևքանշան գրասենյակային/աջ թևային ՌՈ/», 90 զույգ « Ուսադիր / Ուսադիր ավագ լեյտենանտի ՌՈ/ », 150 զույգ « Ուսադիր / Ուսադիր ավագ ենթասպայի ՌՈ/», որոնք ամբողջությամբ չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետը՝ (խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը) ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.01.2026թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ԶԳՍՏ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **12,142** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն) և **1,214** ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) որը հաշվարկված է մինչև 18.12.2025թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **26,196** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **39,294** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2026թ. հունվարի 30-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **26,196** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **39,294** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԶԳՍՏ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: **Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2026թ. հունվարի 30-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2074 սենյակ:**

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ